# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**12 մարտի 2018 թվականի N 19**

***ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Գարիկ Զարգարյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Նոր Արտամետ համայնքի 0 փողոց թիվ 37 հասցեում գտնվող 0.088 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (ծածկագիր՝ 0024-0013, վկայական N 26012018-07-0046) օժանդակ շինության և պարսպապատման շինարարության թույլտվություն:
2. Պարտավորեցնել Գարիկ Զարգարյանին.
   1) շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինական պետական կոմիտեին՝ համաձայն N 2-5 ձևի.
   2) մուծելու սահմանված տեղական տուրքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2018 թ. մարտի 12**
**գ. Նոր Արտամետ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**13 մարտի 2018 թվականի N 20**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 43 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի 2017 թվականի մայիսի 30-ի «Շինարարության թույլտվություն տալու և հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» N 43 որոշման 3-րդ կետը «նշանակության» բառից հետո լրացնել «գյուղատնտեսական արտադրական օբյեկտների» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2018 թ. մարտի 13**

**գ. Նոր Արտամետ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 մարտի 2018 թվականի N 21**

**ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի, Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 53 և N 57-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Համայնքի բյուջեի 4726՝ հուղարկավորության նպաստներ, հոդվածից 30.0 /երեսուն հազար/ դրամ հատկացնել Էլմիրա Համոյի Մանուկյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2018 թ. մարտի 13**

**գ. Նոր Արտամետ**